3530

ԶԵԿՈՒՅՈՒՄՆ

ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՄԻԱԳ ԵԿԵՂԵՑՈՒ

1908—1911 տ. տ. հաշիւներով.

281.6
Ա-29

Ալէքսանդրապոլ
ՏՊԱՐԱՆ Ե. ՍԱՆՈՅԵԱՆՑԻ
1912

2010

28-29

ԶԵԿՈՒՅՈՒՄՆ

ԱՂԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԱՌԱՔ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ։

1911 թ. Մայիսի 29-ին Աղէքսանդրապօլի Ս Աստուածածին առաք եկեղեցու ծխական ժողովը ընտրելով մեզ՝—Հաջիբաբ Տէր Յովհաննէսեան, Աղէքսանդր Քուփալեան, Գէորգ Այվազեան, Գէորգ Միքայէլեան և Պետրոս Այվազեան՝ Վերաստուգիչ Յանձնաժողովի անդամներ, իրաւունք տուեց վերաբննելու Ս. Աստուածածին Ա. եկեղեցու և Արզումեան օրիորդաց դպրոցի 1908/9, 1909/10 և 1910/11 ուսումն. տարիների նոյն եկեղեցու երեցփոխանի և Հոգաբարձութեան եռամեայ ել և մտից դրամական հաշիւները, նոյնպէս նոր ընտրուելիք երեցփոխանի և Հոգաբարձութեան եռամեայ շրջանի դրամական հաշիւները։

Նոյն թուի Յուլիսի 4-ին Յանձնաժողովս ստացաւ տեղիս Հոգևոր Կառավարութիւնից № 1688 գրութիւնը, որով յայտնում էր. «Համաձայն վիճակիս Փոխ-Թեմական տարւոյս Յուլիսի 1-ի № 1208 գրութեան ատեանս սրանով յայտնում է, որ հաստատուած էր 3 տարի ժամանակով Ս. Աստուածածին-եկեղեցու վերաստուգիչ Յանձնաժողովի պաշտօնի մէջ, ուստի ատեանս առաջադրում է Ձեզ անյապաղ ընդունել Արզումեան դպրոցի նախկին Հոգաբարձութիւնից ; ոլոր հարկաւոր գործերն ու հաշուեմատեանները, կատարել հարկաւոր վերաստուգումն և եզրակացութեան հետ միասին ներկայացնել ատենիս ի պատշաճաւոր տնօրէնութիւն»։ Համաձայն այդ գրութեան Յանձնաժողովս Յուլիսի 8-ի իր առաջին նիստում ընտրելով Նախագահ Յանձնաժողովիս Գ. Միքայէլեանին և քարտուղար Գ. Այվազեանին որոշեց գիմել վերոյիշեալ հոգաբարձութեան և խնդրել նոյն ամսի 9-ին, երեկոյեան ժամը

2061

6-ին՝ բարեհաճեն յանձնել Յանձնաժողովիս երեք տարեայ հա
մատեանները և նոցա վերաբերեալ կարևոր գործերը. Ի
տասխան այդ գրութեան Հոգաբարձութիւնից ստացուց Յու
9-ին № 65 գրութիւնը. «Հոգաբարձութեանս բոլոր հաշ
տեանները արդարացուցիչ փաստաթղթերի հետ միասին գտ
են խորհրդիս նախկին գանձապահ պ. Վ. Բարսամեանի մո
բին և Հոգաբարձութիւնս սրա հետ միաժամանակ դիմեց և ի
րեց յանձնել այնպիսիք Յանձնաժողովիդ վերստուգութեա
մար»։

Նշանակած օրը Յանձնաժողովիս ներկայացաւ պ. Վ. Բ
սամեանը հետը բերելով երեք հատ ել և մուտքի մատեանն
մի կապոց փաստաթղթեր խառն ի խուռն և յայտնեց, որ կա
ների եկամուտների մատեանները գտնւում են պ. Դ. Տաթևոս
մօտ, թոշակաստացութեան անդորրագրերի մատեանները՝ Հ
Ափինեանի մօտ, իսկ եկեղեցու մուտքի վերաբերեալ մատ
ը՝ Ղ. քհ. Մատնիշեանի մօտ։ Յանձնաժողովս տեղեկանալով
մասին որոշեց չընդունել պ. Վ. Բարսամեանի ներկայացրած
կանոն փաստաթղթերը և թերի հաշուեմատեանները, այլ
պ. Վ. Բարսամեանին հոգաբարձական խորհրդի քարտուղարը
կանոնաւորել իր մօտ եղած փաստաթղթերը և յանձնել
բարձութեան. Հոգաբարձութեանն էլ դիմել և խրդրել, որ
Բարսամեանի և խորհրդի միւս անդամների մօտ գտնւած մատ
ներն և փաստաթղթերը ի մի ամփոփել և Յուլիսի 16-ին յ
Յանձնաժողովիս պատշաճաւոր արձանագրութեամբ։

Ի պատասխան այդ գրութեան Յանձնաժողովս ստ
Յուլիսի 20-ին № 71 գրութիւնը. «Ներկայումս հրաժարա
բեցփոխանն ստուգում է իր եռամեայ հաշիւներն և երբ ա
կեղեղու և դպրոցի հաշուեմատեաններն ու ապահովագրերը—
մատեան և օժանդակիչ գրքեր՝ արդարացուցիչ փաստաթղթ
ստանայ – Յանձնաժողովիդ գրութեան մէջ յիշատակուած անձ
և ամփոփէ—Յանձնաժողովիդ առանձին հրաւէր կուղարկէ ս
նալու այնպիսիք պատշաճաւոր ցուցակագրութեամբ»։

Յանձնաժողովս ստանալով այդ գրութիւնը որոշեց սպ
մինչև Յուլիսի 25-ը և մինչև այդ օրը չստանալու դէպքում յ
նել ի գիտութիւն Դերապատիվ Գրիգոր-Բիսկուպին Երևանի

ZUUR-Ամ ՍՍՀ
Ս. Ա. Մաշտոցի անվան մատենադարան
44611-ա
29624-

և խնդրել պատշաճաւոր անօրէնութիւն, որ և Յուլիսի 26-ին ի
կատար ածուեց այդ որոշումը, որովհետև մինչև այդ չստացուեց
Հոգաբարձութիւնից հաշուեմատեանները։

Յուլիսի 31-ին նշանակած էր Ս. Աստուածածին աւ. եկեղե-
ղեցում լրացուցիչ հոգաբարձական ընտրութիւն. այդ օրը ժամը
12-ին, ծխական ժողովի բացումից առաջ, Յանձնաժողովս Հոգա-
բարձութիւնից ստացաւ Յուլիս 31-ի № 75 գրութիւնը, որով
յայտնում էր. «Հոգաբարձական խորհուրդս խնդրում է Յանձնա-
ժողովիդ այսօր երեկոյեան ժամի 7-ին բարեհաճել զալ դպրոց՝
խորհրդիս եռամեայ գործունէութեան հաշիւները ստանալու»։

Նոյն օրը Յանձնաժողովիս նախագահն, քարտուղարը և ան-
դամ պ. Աղ. Քուփալեանը գնացին դպրոց և ստացան Հոգաբար-
ձութիւնից 25 յօդւածներով հաշուեմատեանները և ապացուցա-
գրերը պատշաճաւոր արձանագրութեամբ։

Յանձնաժողովս նախ հարկ է համարում յայտնել, որ 1908
թուից մինչև 1911 թիւը Հոգաբարձական խորհրդի անդամներն
եղել են պ.պ. Ազարէգ Ամիրեան (նախագահ), Կարապետ Ափի-
նեան (թոշակաստաց), Դ. Տաթևեան (կալւածների կառավարիչ),
Վահան Բարսամեան (երեցփոխան և գանձապահ) և Յակոբ Էհ-
րամճեան։ Պ. Վ. Բարսամեանի հրաժարելուց յետոյ (1911 թուի
Ապրիլի վերջը) Հոգևոր Իշխանութեան կարգադրութեամբ եկեղե-
ցու հաշիւները վարել է արժ. Ղ. քհ. Մատնիշեանը, մինչև նոր
երեցփոխանի ընտրութիւնը. իսկ գանձապահի պաշտօնը՝ Հոգա-
բարձութեան որոշմամբ, ժամանակաւորապէս՝ պ. Յ. Էհրամճեանը։

Հոգաբարձութիւնը իր եռամեայ գործունէութեան ընթաց-
քում դպրոցի և եկեղեցու բոլոր արդիւնքները և ծախսերը մրա-
ցրել է հինգ ել և մուտքի մատեանների մէջ, բացի մոմի հաշուից,
որը տարուել է առանձին մատեանով։

Յանձնաժողովս Օգոստոսի 1-ից մինչև Սեպտեմբերի 20-ը
ունեցաւ մօտաւորապէս 80 նիստ, որի ընթացքում վերստուգե-
լով Հոգաբարձութեան եռամեայ գործունէութեան դրամական
հաշիւները գտաւ հետեւեալը, որի մասին պատիւ ունի զեկուցա-
նելու յարգելի ծխականներիդ։

I. Ս. Աստուածածին Աւագ եկեղեցու երեցփոխանի գնած, տրն-
տեսած եւ վաճառած մոմի ել եւ մուտքի հաշիւը։

Երեցփոխան պ. Վ. Բարսամեանը իր պաշտօնավարութեան ընթացքում, այն է 1908 թուի Ապրիլի 9 ից մինչև 1911 թուի Ապրիլի 30-ը մոմի ել և մուտքի մատեանով մուտք էր զրել այսպէս։

	Մ Ո Մ. Փութ.	Ֆունտ.
1908 թուին.		
1. Նախկին երեցփոխան պ. Յ. Էրամճեանից ստացած	3	$6^1/_8$
2. Եկեղեցում տնտեսած .	—	$30^1/_4$
3. Մոմի կապալառուից գնած . . .	28	$37^5/_8$
Գումար .	32	34
1911 թուին.		
1. Տնտեսած . .	—	$21^1/_2$
2. Գնած . . .	6	$34^7/_8$
Գումար .	7	$16^3/_8$

1909 թուին.		
1. Տնտեսած . .	1	$11^1/_8$
2. Նէր ստացած .	—	$23^1/_2$
3. Գնած . . .	31	$26^7/_8$
Գումար .	33	$21^1/_2$
1910 թուին.		
1. Տնտեսած . .	3	$10^3/_8$
2. Գնած . . .	33	$12^2/_8$
Գումար .	36	$22^5/_8$

Այնպէս որ պ. Վ. Բարսամեանը իր պաշտօնավարութեան ընթացքում մուտք էր զրել.—

1. Նախկին երեցփոխանից ստացած .	3	$6^1/_8$
2. Նէր	—	$23^1/_2$
3. Տնտեսած . . , . .	5	$33^1/_4$
4. Գնած կապալառուներից .	100	$31^5/_8$
Ընդամենը	110	$14^1/_2$

Իսկ Յանձնաժողովիս վերստուգման ժամանակ նոյն մատեանով դուրս եկաւ.—

	Մ Ո Մ. Փութ.	Ֆունտ.
1908 թուին.		
1. Նախկին երեցփոխանից ստացած . . .	3	$6^1/_8$
2. Տնտեսած . .	—	$30^1/_4$
3. Գնուած . . .	28	$37^3/_4$
Գումար .	32	$34^1/_8$
1909 թուին.		
1. Տնտեսած . .	1	$11^1/_8$
2. Նէր . . .	—	$23^1/_2$
3. Գնուած . . .	31	$23^1/_2$
Գումար .	33	$18^1/_8$

1910 թուին.		
1. Տնտեսած . .	3	$10^3/_8$
2. Գնուած . . .	33	$16^5/_8$
Գումար .	36	27
1911 թուին.		
1. Տնտեսած . .	—	$21^1/_2$
2. Գնուած . . .	7	$27^7/_8$
Գումար .	8	$9^3/_8$
Ընդամենը		
1. Նախկին երեցփ. ստ. .	3	$6^1/_8$
2. Տնտեսած . .	5	$33^1/_4$
3. Նէր . . .	—	$23^1/_2$
4. Գնուած . . .	101	$25^3/_4$
Գումար	111	$8^5/_8$

Եթէ համեմատենք պ. Վ. Բարսամեանի մուտք զրած մոմի ընդհանուր գումարը Յանձնաժողովիս դուրս բերած և ստուգած ընդհանուր գումարի հետ, տարբերութիւնը կըլինի $31^1/_8$ ֆունտ մոմ, որպիսին ստուգման ժամանակ պարզուեց, որ այդ տարբերութիւնը առաջ է եկել փոխանցումների մէջ սխալուելուց, որ և իրօք կար զրուած մատեանում։ Վերոյիշեալ 111 փութ $8^5/_8$ ֆ. մոմից եկեղեցում հանդիսաւոր օրերին և վեհափառ կաթուղիկոսի դալու ժամանակ վառուած 3 փութ $9^1/_8$ ֆունտ մոմ, իսկ մնացած 107 փութ $39^1/_2$ ֆունտ մոմը յանձնել է ծախսելու, որից մուտք է զրուած մոմի ել և մուտքի մատեանում տասն երեք հազար մի հարիւր քսան և հինգ ռուբլի (13 125 ռ. 69 կ.) 69 կոպէկ, որի մէջ մտնում է նաև 3 փութ $9^1/_8$ ֆունտ եկեղեցում վառուած մոմի արժէքը։

Յանձնաժողովս վերստուգելով իւրաքանչիւր տեսակի մոմ առանձին-առանձին և հատերով հաշուելով գտաւ, որ բոլորը, թէ վաճառուած և թէ վառուած մոմերի գինը ճիշտ հաշուած և զրուած է. իսկ 13125 ռ. 69 կ-ի փոխարէն մուտք է զրուած ել և մուտքի մատեանների մէջ 12893 ռ. 57 կ., որը հանելով 13125 ռուբ. 69 կոպ.-ից պակաս է մնում 232 ռ. 12 կ., որը պէտք է հաշուել եկեղեցում վառուած մոմի արժէքը, որպիսին զրուած էր մոմի ել և մուտքի մատեանում։

Նոյն ժամանակամիջոցում պ. Վ. Բարսամեանը գնած մոմի համար ելք է զրել՝ վճարած մոմի կապալառուներին, ընդամենը չորս հազար ութը հարիւր յիսուն ռուբլի 13 կոպ (4850 ռուբ. 13 կոպ.), այնպէս որ մոմի վաճառումից զուտ արդիւնք է մնացել պ. Բարսամեանի օրով ութը հազար քառասուն և երեք ռուբլի 44 կոպ. (8043 ռ. 44 կ.). իսկ արժանապատիւ Ղ. քհ. Մատնիշեանի վարած մատեանով՝ 10 փութ մոմի վաճառումից զուտ արդիւնք է մնացել վեց հարիւր երեսուներկու ռուբլի 50 կոպէկ (632 ռ. 50 կ.), ընդամենը ութը հազար վեց հարիւր հիսունհինգ ռուբ. 94 կոպ. (8675 ռ. 94 կ.)

Երկուսի օրով էլ մոմի մէկ ֆունտը ծախուել է միջին թուով երկու ռուբլի 70 կոպ. (2 ռ. 70 կ.)։

Յանձնաժողովս վերոյիշեալ մոմի նկատմամբ հարկ է համարում յայտնել հետեւեալը. ա. կոճատ մոմերից 1908 և 1909 թ.թ.

մուտք էր գրված 6 փութ 33 ֆունտ վաճառված մոմի արժէք 64 ռ. 60 կ., այն ինչ 1910 և 1911 թ. թ. այդպիսի արդիւնք չկար մուտք գրված։ Այս հանգամանքը պ. Վ. Բարսամեանը բացատրեց, որ այդ տարիներում կոճատ մոմը առանձին վարձատրութեամբ թափւում էր եկեղեցու սպասաւորի ձեռքով և վառւում եկեղեցում, որից արդիւնք չգոյանալով մուտք էլ չէ գրված։

Յանձնաժողովիս կարծիքով աւելի լաւ կըլինէր, եթէ իւրաքանչիւր տարւայ գոյացած կոճատ մոմի քանակը գրէր, իսկ եթէ նորից թափւում է, նոյնպէս գրել, թէ կոճատ մոմից որքան վառելու մոմ է գոյանում, որով նախ պարզ կըլինէր թէ իւրաքանչիւր տարի որքան կոճատ մոմ է գոյանում և երկրորդ եկեղեցու հաշւից ինչ քանակութեամբ մոմ է ծախսւում։

Բ. Կապալառուներին վճարւած մոմի արժէքների հետ շատ տեղերում չկար գրված, թէ քանի փթի կամ ֆունտի համար է վճարւած արժէքինը, այլ միայն գրված է—մոմավաճառին կամ կապալառուին վճարւած է այսքան ռուբլի — գումարի քանակը։ Չկար նոյնպէս մոմի մատեանի մէջ կապալառուի ստորագրութիւնը և ոչ էլ առանձին հաշիւ թէ որքան մոմ է վաճառւած եկեղեցուն։ Լաւ կըլինէր, որ առանձին հաշիւ ստացւէր և կամ մոմի ել և մուտքի մատեանի մէջ, երբ հատերի է վերածւում, կապալառուն ստորագրէր իր բաց թողած մոմերի քանակութեան տակ, որը կարող էր ծառայել իբրև փաստաթուղթ, ինչպէս վարվելիս է եղել նախկին երեցփոխան պ. Յակոբ Էհրամճեանը։

Մոմի հաշիւը վերջացնելուց յետոյ Յանձնաժողովս վերստուգեց մուտքի յօդւածները՝ համեմատելով իր մօտ եղած ել և մուտքի մատեանների մէջ գրված մուտքերը — անդորրագրերով և այլ ներկայացրւած փաստաթղթերով ստացւած եկամուտների հետ և առանձնացնելով իւրաքանչիւր տեսակի արդիւնքը կազմել է ստորև գրված տախտակը, որտեղ նշանակւած է իւրաքանչիւր արդիւնք առանձին-առանձին ել և մուտքի մատեաններով, անդորրագրերով և այլ փաստաթղթերով. նոյնպէս և նշանակւած է վերստուգման ժամանակ դուրս բերւած տարբերութիւնները։

Հոգաբարձութիւնը իւր եռամեայ պաշտօնավարութեան ժամանակամիջոցում մուտք էր գրել ել և մուտքի մատեաններում.—

	Ռ.	Կ.
1908 թ. Ապրիլի 9-ից մինչև 1909 թ. Դեկտեմբերի վերջը (մի մատեանում)	27273	49
1910 թ.	11054	07
1911 թ. պ. Վ. Բարսամեանի ձեռամբ .	5777	90
1911 թ. պ. Ց. Էհրամճեանի ձեռամբ . .	2452	68
1911 թ. Ղ. քհ. Մատնիշեանի ձեռամբ .	1155	13
Ընդամենը .	47713	27

Ղ. քհ. Մատնիշեանը իր մուտք գրած 1155 ռուբ. 13 կ.-ից 92 ռուբ. 33 կոպ. յանձնել է նոր երեցփոխան պ Գէորգ Բունաթեանցին, որպէս մնացորդ հաշիւները յանձնելու ժամանակ։

ՄՈՒՏՔ. — ՏԱԽՏԱԿ I.

	ԵԼ. ԵՒ ՄՈՒՏՔԻ ՄԱՏԵԱՆՆԵՐՈՎ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ.	Ռուբ.	Կ	Անդրադարձ գրեալ. Ռուբ.	Կ.	Կալւածների հաստատարկի տրելիքներից. Ռուբ.	Կ.	Յանձնաժողովս դուրս բերած տարբերութիւն. Ռուբ.	Կ.
1	Նախկին երեցփոխանից .	174	91	174	91	—	—	—	—
2	Նախկին Հոգաբարձութ. .	4	82	4	82	—	—	—	—
3	%% և կողմնակի մուտք .	19689	10	19689	10	—	—	—	—
4	Կոճատ մոմից	64	60	64	60	—	—	—	—
5	Տնտեսած և գնած մոմից .	12893	57	12893	57	—	—	—	—
6	Նէրքներ ուխտաւորներից .	82	27	84	58	—	—	2	31
7	Մկրտութեան լուսագին .	167	05	167	05	—	—	—	—
8	Դիակառք և պատար. լուս.	435	50	443	24	—	—	7	74
9	Պսակներից	161	10	161	10	—	—		—
10	Թոշակագրաքներից . , .	5079	90	5241	50	—	—	161	60
11	Փոխարինարար Քաղ. Բանկ.	—	—	1000	00	—	—	1000	00
12	Կալւածներից	5352	64	6252	44	7482	29	1200	70*
	ԳՈՒՄԱՐ	44105	46	46176	91	7482	29	2372	35
	Ղ. Ք. ՄԱՏՆԻ	ՇԵԱ	ՆԻ	ՉԵ		ՌԱՄ Բ.			
1	Պատարագի լուսագին . .	16	80	16	80			—	—
2	Վաճառած մոմից . , . .	1112	50	1112	50			—	
3	Մկրտութեան լուսագին .	10	50	10	50			—	-
4	Նէրքներ ուխտաւորներից .	10	15	10	15			—	—
5	Գանձանակներից . . .	5	18	5	18			—	—
	ԳՈՒՄԱՐ	1155	13	1155	13			—	—

*) Ծանօթ. Վերոյիշեալ 1200 ռուբլի 70 կոպ գումարից պ. Վ. Բարսամեանի օրով

	Գ. ՅԱԿ. ԷՀ	ՐԱՄ	ՀԵ	ԱՆԻ	ՉԵ	ՌԱՄ	Բ		
1	Կալուածներից	1410	–	1410	–			--	–
2	Թոշակագրամներից . . .	63	–	63	—			—	—
3	Հոգևոր Կառավարութ. (Սինոդի պարտքից) . .	600	—	600	—			--	–
4	%% դրամագլխից . . .	379	68	379	68			--	–
	ԳՈՒՄԱՐ	2452	68	2452	68			—	

Նախ քան տարբերութիւնների մասին խօսելը աւելորդ չէր լինի պարզել յարգելի ծխականներից այն պատճառները, որոնցից առաջ են եկել այդ տարբերութիւնները և որոնց մասին Հոգաբարձութիւնը տուել է իր բացատրութիւնը։

Առաջին. 1908 և 1909 թ.թ. կալուածների արդիւնքների անդորրագրերի մատեանի կորցնելը, որի մասին Հոգաբարձութիւնը՝ Յանձնաժողովիս դիմումին պատասխանել է Օգոստոս 31-ի № 76 գրութեամբ ուղարկելով երկու արձանագրութիւնների պատճէններ, նիստ ԻԳ. և Լ., որոնք կցած են սոյն զեկուցմանը. «1908—1909 թ.թ. կալուածական արդիւնքների մատեանը, որ վարում էր խորհրդիս անդամ և կալուածների կառավարիչ պ. Գ. Տատթեւեանը, կորած է և այդ մասին պաշտօնական զեկուցում է տրուած երկու անդամ ու արձանագրուած 1910 թուի Մարտի 28-ին և Ապրիլի 21-ին»։

Երկրորդ. 1910 թ. ել և մուտքի սեպագրութեան մատեանի անյայտանալը, որի մասին պ. Վ. Բարսամեանը Հոգաբարձութեան քարտուղար պ. Գ. Նալբանդեանի և Յանձնաժողովիս անդամների ներկայութեամբ յայտնեց. «1910 թուի Մարտի վերջերին Հոգաբարձակն ժողովի ժամանակ ել և մուտքի սեպագրութեան մատեանը յանձնեցի Հոգաբարձութեան քարտուղար պ. Գ. Նալբանդեանին, որպէս զի վերջինս արտագրէ իսկական մատեանի մէջ. միւս օրը երբ կարիք եղաւ ընթացիք ծախսերը մտցնելու, խնդրեցի մատեանը քարտուղարից, պ. Նալբանդեանը յայտնեց, որ սեղանի վրայ էի թողել, այժմ չկայ, գողացել են։ Երկար որոնելուց յետոյ, երբ չկարողացանք գտնել, ստիպւած եղանք թէ մուտքի արդիւնքները և թէ ծախսերը մտցնել իսկական մատեանի մէջ, ոմանք եղած փաստաթղթերով, ոմանք էլ յիշողութեամբ, փաստաթղթեր չլինելու պատճառով»։ Պ. Վ. Բարսամեանի ասածը հաստատեց և ինքը — պ. Գ. Նալբանդեանը։

Եւ իսկապէս մուտքի արդիւնքների վերստուգման ժամանակ Յանձնաժողովս գտաւ, որ 1908 — 1909 թ.թ. անդորրագրերի մատեանի և 1910 թ. սեպագրութեան մատեանի չլինելու պատճառով մուտք չեն գրել մեծ մասամբ թոշակագրամների և կալուածների եկամուտներից զգալի գումարներ։ Օրինակ.—

I. ԹՈՇԱԿԱԳՐԱՄՆԵՐԻ ԵՐԴԻՒՆՔԸ. ՏԱԽՏԱԿ 2.

	ԵԼ ԵՒ ՄՈՒՏՔԻ ՄԱՏԵԱՆՆԵՐՈՎ ԳՐՒԱԾ ԵՆ.	Ռուբ.	Կոպ.	ԱՆԴՈՐՐԱԳՐԵՐՈՎ ՊԷՏՔ Է ԼԻՆԷԻՆ.	Ռուբ.	Կոպ.
1	1908 թ. . .	925	—	1908 թ. . .	970	—
2	1909 » . .	1760	50	1909 » . .	1845	50
3	1910 » . .	1736	40	1910 » . .	1766	—
4	1911 » . .	658	—	1911 » . .	660	—
	ԳՈՒՄԱՐ	5079	90	ԳՈՒՄԱՐ	5241	50

Հետևապէս եթէ 5241 ռուբլի 50 կոպէկից զուրս գանք 5079 ռուբլի 90 կոպէկ պակասում է 161 ռուբլի 60 կոպ., որը թէև ստացած է անդորրագրերով և պ. Վ. Բարսամեանն էլ ըստորագրել է ստացած, ինչպէս այդ երևում է անդորրագրերի մատեանից, բայց մուտք չէ գրել։ Այդ 161 ռուբլի 60 կոպ. մուտք չէ գրուած հէնց 1909—1910 ուս. տարայ հաշուում, երբ կորել է սեպագրութեան մատեանը։ Այդ ուսումնական տարում անդորրագրերով մուտք է եղել 1947 ռուբլի 50 կոպ., բայց ել և մուտքի մատեանի մէջմտել է միայն 1785 ռուբ. 90 կոպ.։

Պ. Յ. Էհրամճեանի ստացած 63 ռուբլին մուտք է գրուած համաձայն անդորրագրերի։

մուտք չէ գրուած 899 ռուբ. 80 կոպ. իսկ պ. Գ. Տաթեւեանը չէ յանձնել 300 ռուբ. 90 կ., որոնց մասին կայ առանձին բացատրութիւն։

II. ԿԱԼԻՆԾՆԵՐԻ ԱՐԴԻՒՆՔ.

Այս արդիւնքը պատկերացնում է հետևեալ պատկերը. —

ՏԱԽՏԱԿ 3.

	Պ. Վ. ԲԱՐՍԱՄԵԱՆԸ.				Պ. Գ. ՏԱԹԵԻԵԱՆԸ.					
	Եվ և մուտքի մատեաններով մուտք է դրել՝		Անդորրագրերով և եվ և մուտքի մատեաններով պէտք է լինի.		Անդորրագրերով յանձնել է.		Համաձայն տեղեկագրի հաւաքել է.			
		Ռ.	Կ.		Ռ.	Կ.		Ռ.	Կ.		Ռ.	Կ.
1	1908 թ.	1012	22	1908 թ.	1012	22						
2	1909 »	1928	78	1909 »	1928	78						
3	1910 »	540	65	1910 »	1631	31		7181	39		7482	29
4	1911 »	1389	94	3911 »	1199	08						
	ԳՈՒՄԱՐ	4871	59	ԳՈՒՄԱՐ	5771	39		7181	39		7482	29

Տարբերութիւն 899 ռուբլի 80 կոպէկ. Տարբերութիւն 300 ռ. 90 կ.

Այժմ բացատրենք վերև գրված 3-րդ տախտակի մէջ նշանակված տարբերութիւնները։

Ա. 1908 թ. Հոգաբարձութեան եվ և մուտքի մատեանով մուտք է գրած 1493 ռուբլի 27 կոպէկի փոխարէն պէտք է ընդունել 1012 ռուբ. 22 կոպ., որովհետև 1908 թւի Նոյեմբերի 20-ին մուտք գրված 481 ռուբ. 5 կոպ. մնացորդ է 1907—1908 ուս. տարւայ հաշուից և հաւաքել ու յանձնել է նախկին Հոգաբարձութեան կալուածների կառավարիչ պ. Յարութիւն Արարաջեանը, ի հաստատութիւն որի կցված է սոյն զեկուցմանը այդ մասին կազմված և վաւերացրած Սեպտեմբերի 12-ի արձանագրութիւնը։

Բ. 1910 թւի մուտք գրված 720 ռուբլի 65 կոպէկի տեղ պէտք է ընդունել 540 ռուբլի 65 կոպէկ, որովհետև 180 ռուբլին մուտք է գրված 1910 թւի Յունուար և Փետրուար ամիսներում, հետևապէս այն անդորրագրերի մատեանով է հաւաքած, որը կորել է. իսկ Յանձնաժողովիս յանձնած անդորրագրերի մատեանով պ. Գ. Տաթեւեանը կրպակների վարձադրամները սկսել է հաւաքել 1910 թւի Ապրիլի 21-ից, ուրեմն այդ 180 ռուբլին չէ հաւաքված 1910 թւի անդորրագրերի մատեանով։ Հետևապէս պ. Գ. Տաթեւեանը կորած անդորրագրերի մատեանով ստացել է 1908 թւին 1012 ռուբլի 22 կոպ., իսկ 1909 թւին 1928 ռուբլի 78 կոպէկ

ընդամենը 2941 ռ.։ Նոյն պ. Տաթեւեանը իր մօտ գտնված և Յանձնաժողովիս յանձնած անդորրագրերի մատեանով 1910 թւի Ապրիլի 21-ից հաւաքել է 1910 թ. 1631 ռուբլի 31 կոպ., 1911 թւին՝ 1199 ռուբլի 8 կոպէկ, ընդամենը 2830 ռուբլի 39 կոպէկ, որպիսի գումարը յանձնված է պ. Վ. Բարսամեանին առանձին ստորագրութեամբ, բայց պ. Վ. Բարսամեանը այդ 2830 ռուբլի 39 կոպէկից եվ և մուտքի մատեաններում մտցրել է 1910 թւին 540 ռուբլի 65 կոպ., 1911 թւին՝ 1389 ռուբլի 94 կ. ընդամենը 1930 ռուբլի 59 կոպ., ուրեմն իր ստացածից պ. Վ. Բարսամեանը մուտք չէ դրել 899 ռուբլի 80 կոպէկ։ Այս երդոյթը պ. Վ. Բարսամեանը վերագրեց սեագրութեան մատեանի անյայտանալուն, որի պատճառով հնարաւորութիւն չէ ունեցել ճշտութեամբ մուտք գրելու։

Գ. պ. Գ. Տաթեւեանը Հոգաբարձութեան ներկայացրած իր երկու տեղեկագրերով* ցոյց է տուել, որ իր պաշտօնավարութեան ժամանակ միչև 1911 թւի Յուլիսի 10-ը կրպակների վարձադրամ ստացել է մէկով 6110 ռուբլի 54 կոպէկ, իսկ միւսով 1371 ռ. 75 կոպ. ընդամենը 7482 ռուբլի 29 կոպէկ, այն ինչ Յանձնաժողովիս ձեռքի տակ եղած թէ մատեաններով և թէ անդորրագրերով պարզւեց, որ նա յանձնել է պ. Վ. Բարսամեանին մատեաններով և անդորրագրերով ընդամենը 5771 ռուբլի 39 կոպէկ, իսկ պ. Յակ. Էհրամեանին 1410 ռուբլի, բոլորը 7181 ռուբլի 39 կոպէկ։ Ուրեմն պ. Տաթեւեանը ստացել է 7482 ռուբլի 29 կ. և այդ գումարից յանձնել է միայն 7181 ռուբլի 39 կոպէկ. Հետևապէս իրան մօտ պահել և չէ յանձնել 300 ռուբլի 90 կոպէկ։ Իսկ այդ չյանձնած 300 ռուբլի 90 կոպէկը հաւաքված է 1908—1909 թ. կորած անդորրագրերի մատեանով եկեղեցապատկան կրպակների արդիւնքից, որովհետև էջմիածնապատկան կրպակներից գոլորցին հասանելիք արդիւնքները թէ տեղեկագրերով և թէ անդորրագրերով իրար համապատասխան են։

Վերստուգման ժամանակ վերոյիշեալ փաստերով և անդորրագրերով դուրս բերած տարբերութիւնները ամփոփելով յանձնաժողովս գտաւ, որ հոգաբարձութիւնը մուտք չէ գրել. —

* Որոնք կցված են սոյն զեկուցմանը։

1. Ուխտաւորներից նէրներ	2 —	31
2. Դիակառքից և պատ. լուսագին . ,	7 —	74
3. Թոշակագրամներից	161 —	60
4. Կալուածների եկամուտ (պ. Վ. Բարսամեանի մօտ)	899 —	80
5. Նոյն կալուած. եկամուտ (պ. Տաթեւեանի մօտ)	300 —	90
Ընդամենը . .	1372 —	35

Վերոյիշեալ մուտք չգրուած 1372 ռուբլի 35 կոպէկի վրայ յանձնաժողովս աւելացրեց նաև 1000 ռուբլի, որ դուրս կըգայ մուտք չգրած 2372 ռուբլի 35 կոպէկ։

Այդ 1000 ռուբլին ելք է գրուած 1908 թւի Յուլիսի 14-ին, վճարելով քաղաքային հասարակական բանկին դպրոցի համար տուած 1000 ռուբլու մուրհակը դուրս առնելիս. սակայն մուտքի մէջ չէր գրուել այդ մի հազար ռուբլին, որը անհրաժեշտօրէն պէտք է նաև մուտք գրուած լինէր։

Հոգաբարձութիւնը՝ վերոյիշեալ 1000 ռուբլու մասին, իր Սեպտեմբերի 15-ի № 89 գրութեամբ՝ ի պատասխան Յանձնաժողովիս երեք գրութիւններին, որոնցով խնդրում էինք ուղարկել նախկին կազմի պարտքերի և առհասարակ դրամական հաշիւների յանձնողական-ստացողական արձանագրութեան պատճէնը, ուղարկելով 1908 թւի Սեպտեմբերի 30-ի արձանագրութեանը պատճէնը, որը կցած է սոյն զեկուցմանը, ի միջի այլոց յայտնում է... «Ելքի մասին հին կազմը չէ տուել պաշտօնական տեղեկագիր, այլ իր քարտուղարը կազմել է անվճար մնացած ռոճիկների և պարտքերի մասնաւոր ցուցակ և այդ ցուցակի համեմատ կատարուել են պարտքերի վճարումները ու ելք գրուել ժապաւինեալ մատեանում, որոնց մէջ նաև 1000 ռուբլու՝ քաղաքային հասարակական բանկում հին կազմի զեղջած մուրհակը, որ մուտք է գրուած նոյն կազմի վարած 1907 թւի ել և մուտքի մատեանի մէջ Օգոստոս ամսի 18-ինն։ Այս այսպէս լինելով հանդերձ, ոչ յիշեալ արձանագրութեան պատճէնից և ոչ էլ հէնց մուրհակից չի երևում, թէ մուրհակը տուել է հին կազմը, այլ ստորագրութիւնները ապացուցանում են հակառակը, որ մուրհակը զեղջել է նոր կազմը, որովհետև ստորագրել են մուրհակին

պ.պ. Դ. Տաթեւեան, Կար. Ափինեան և Վահ. Բարսամեան, ինչպէս ցոյց է տալիս սոյն զեկուցման կցած մուրհակը։

Ե Լ Ք.

Նոյն Հոգաբարձութիւնը վերոյիշեալ մատեաններով ելք է գրել պ. Վ. Բարսամեանի վարած մատեաններով։

	Ռ.	Կ.
1) 1908 թւի Ապրիլի 9-ից . . .	13820 —	10
2) 1909 թւի Յունուարի 1-ից . . .	13233 —	45
3) 1910 թւի Յունուարի 1-ից . . .	11316	52
4) 1911 թ Յունուարի 1-ից մինչև նոյն թւի Ապրիլի 21-ը	5769 —	49
Ընդամենը ,	44139 —	56
Պ. Յ. Էհրամճեանի ձեռամբ (1911 թ.) .	2507 —	74
Ղ. քհ. Մատնիշեանի ձեռամբ (1911 թ.) .	1062 —	80
Ընդամենը .	47710 —	10

Յանձնաժողովս վերստուգման ժամանակ մի առ մի վերաքննելով ծախսերը իր մօտ եղած փաստաթղթերով, յարմար գտաւ ի մի ամփոփել ել և մուտքի մատեանների մէջ գրած նման ծախսերը և մի քանիսն էլ միացնելով ընդհանուր գումարով առանձին-առանձին նշանակել։ Իսկ ամփոփ գաղափար տալու համար, թէ իւրաքանչիւր առանձին տեսակի ելքի յօդուածներով երեք տարում ինչ գումար է ծախսուել, ինչպիսի փաստաթղթերով է տեղի ունեցել այդ ծախսերը և թէ ինչ տարբերութիւններ է նկատուել, այդ մասին էլ յարմար համարեց տալ առանձին բացատրութիւն իւրաքանչիւրի մասին։

	ԵԼ ԵՒ ՄՈՒՏՔԻ ՄԱՏԵԱՆՆԵՐՈՎ ԾԱԽՍՒԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐ.	Ռ.	Կ.	Կրկնակի եւ աւել գրուած ծախսեր. Ռ.	Կ.
	Պ. Վ. ԲԱՐՍԱՄԵԱՆԻ ՁԵՌԱՄԲ.				
1	Վերաբարձրուած դրամական . . , ...	180			
2	Աղ. Շաքարեանին կրպակ. յետ գնման հաշուից	754	—		
3	Տեղական բանկերին վճարուած	2800	—		
4	Ճանապարհածախս պատերազմ. և Հոգաբարձ.	214	65		
5	Աւանսով արուած ուսուցիչներին և ծառաներին	994	34		

6	Իշխ. Արղութեանների, Միրզայեանի և Ղարաղուլումչեանի պահած որդեգրուհ. համար .	268	46		
7	Կարճ ժաման. վերցրած պարտքերից. . . .	727	—		
8	Մոմի կապալառուներին մոմագին	4850	13		
9	Դպրոցի նորոգութեան	203	18		
10	Եկեղեցու նորոգութեան	223	54	14	
11	Եկեղեց., դպրոց. և կրպակ. մայթերի շինութ.	209	40		
12	Ռոճիկ դպրոցի ուսուցիչներին և ծառաներին .	22276	36	60	—
13	Դպրոցի մանր ծախսեր	209	87		
14	Ռոճիկ եկեղ. սպասաւոր. և նպաստ. այրին. .	4022	65		
15	Եկեղեցու մանր ծախսեր	1117	90	49	24
11	Կրպակների նորոգութեան . . . , . . .	95	10		
17	Ծախսած մոմերի %%, գնահատական տուրք.				
18	Դիւանական և այլ ծախսեր , ...	4992	98		
	ԳՈՒՄԱՐ . .	**44139**	**56**	**123**	**24**
	Ղ. ՔՀ. ՄԱՏՆԻՇԵԱՆԻ ՁԵՌԱՄԲ.				
1	10 փութ մոմագին . . . , ...	480	—		
2	1906 և 1907 թ. թ. Ցաջորդ. կահկարասիք .	100	—		
3	Ռոճիկ եկեղեցական սպասաւորներին և նպաստ այրիներին և այլ ծախսեր	482	80		
	ԳՈՒՄԱՐ . .	**1062**	**80**		
	Գ. Ց. ԷՀՐԱՄՃԵԱՆԻ ՁԵՌԱՄԲ.				
1	Կրպակի նորոգութեան : . . . . . , . .	202	61		
2	Մանր ծախս , ... , ...	7	55		
3	Աղ. Շաքարեանին ի հաշիւ կրպակ. յետ գնման	217	—		
4	Ռոճիկ ուսուցիչներին և ծառաներին . . .	2064	60		
5	Ճանապարհածախս . . . . . , . . .	15	98		
	ԳՈՒՄԱՐ . .	**2507**	**74**		
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ . .	**47710**	**10**	**123**	**24**

Վերևի տախտակից երևում է, որ Հոդաբարձութիւնը 1908 թւի Ապրիլի 9-ից մինչև 1911 թւի Յուլիսի 10-ը բոլոր ել և մուտքի մատեաններով ելք է գրել ընդամենը, 47710 ռուբլի 10 կոպէկ։

Այժմ դանք բացատրութիւններին իւրաքանչիւր ելքի յօդուածի։

I. *Վերադարձրած գրաւական.* Հոդաբարձութիւնը ելք է գրել 180 ռուբլի վերադարձրած գրաւական, այն ինչ մուտքի բաժնում գրած է միայն Եզոր Բոյեաճեանից ստացած 80 ռուբլի,

իսկ Աղաբ. Շաքարեանցին վերադարձրած 100 ռուբլին չէ գրած մուտք և բացատրութիւն էլ չկայ թէ ո՞ւրբ է ստացուած։ Տես № 26 փաստաթուղթը զեկուցման կցած։

II. Աղաբէգ Շաքարեանին տրուած է կրպակների յետ գնման հաշուից պ. Վ. Բարսամեանի ձեռամբ 754 ռուբլի իսկ պ. Յակոբ Էհրամճեանի՝ 217 ռուբլի ընդամենը 971 ռուբլի, այն ինչ համաձայն կրպակների յետ գնման պայմանի, որի պատճէնը կցած է սոյն զեկուցմանը, Հոդաբարձութիւնը պէտք է վճարէր 1333 ռուբլի 33 կոպէկ, որպիսի գումար Հոդաբարձութիւնը ստացել է յետ գնած կրպակներից և մի բան էլ աւելի այն է 1371 ռուբլի 75 կոպէկ, բայց չէ յանձնել Աղ. Շաքարեանցին հասանելիքը։

Այդ կրպակների վարձագրամների արդիւնքը և տուելիք պարտքը Աղ. Շաքարեանին 1910—1911 թ. և 1911 — 1912 թ. նախահաշիւների մէջ Հոդաբարձութիւնը չէ մտցրել։

Տուած 217 ռուբլի գումարի համար չկար փաստաթուղթ, որ տուել էր Յակոբ Էհրամճեանը. նոյնպէս մուտք չէ գրուած և յայտնի էլ չէ թէ Հոդաբարձութիւնը ստացել է նոյն Շաքարեանից 400 ռուբլի քարի արժէքը,* որ Շաքարեանը տանձին պայմանով և սաորագրութեամբ, պարտաւորուել է տալու։ Ընդհանրապէս այս հաշիւը կարօտ է պարզաբանութեան, բայց Յանձնաժողովս հնարաւորութիւն չունեցաւ ստուգել և պարզաբանել, չնայելով որ այդ մասին երեք անգամ դիմեց Հոդաբ. (23 Օգոստոս № 7, 29 Օգոստոս № 9 և Սեպտեմբեր 10 № 10 գրութիւնն.) և խնդրեց այդ կրպակների վերաբերեալ դրամական հաշիւները և գործերը. Հոդաբարձութիւնը միայն Սեպտեմբերի 15-ին № 89 գրութեամբ ուղարկեց յետ գնման պայմանի պատճէնը և ուրիշ էլ կրպակակալների հետ կապած պայմանագրերը, որոնք լրիւ չէին, Մկրտիչ Իսահակեանի վարձած կրպակների պայմանագրերը չկային։ Թէ ինչու չուղարկեց Հոդաբարձութիւնը այդ կրպակներին վերաբերեալ հաշիւները, Յանձնաժողովիս համար մնաց անբացատրելի։

III. Փոխարինաբար տեղական բանկերից վերցրած պարտքերից վճարուած է 1908 թ. 1000 ռուբլի, իսկ 1911 թ. 1800 ռուբլի։ 1908 թւին վճարուած 1000 ռուբլին Հոդաբարձութիւնը

* Տես № 3 ստացականը։

մուտք չէ գրել, որ և 1000 ռուբլու գումարով Յանձնաժողովս մուտքը պակաս գտաւ և աւելացրեց այն մուտքի վրայ, որի բացատրութիւնը վերևը արդէն գրուած է,

IV. *Ճանապարհածախս։* – Հոգաբարձութիւնը երեք տարուայ ընթացքում ճանապարհածախս է տուել 230 ռուբլի 63 կոպ. այդ գումարից 71 ռուբլի տրուած է Երևան գնացող պատուիրակներին ճանապարհածախս, իսկ 159 ռուբլի 63 կոպէկը Հոգաբարձական խորհրդի անդամներին և քարտուղարին։ Այս ծախսերի համար բացի Երանդ քհ. Նալբանդեանի և պ. Վ. Բարսամեանի մէկ անգամ Երևան գնալու համար եղած ծախսերի փաստաթղթերից, միւսների համար չկային և ոչ մի փաստաթուղթ։

V. Դպրոցի ուսուցիչներին, ծառաներին և Նոյնիսկ Ադ. Զաքարեանին (25 ռուբլի) աւանսով տրուած է 994 ռուբլի 34 կոպ., որպիսի գումարից յետ է ստացուած և մուտք է գրուած միայն 533 ռուբլի 43 կոպէկ իսկ մնացած 460 ռ. 91 կ.-ի մասին ոչինչ յայտնի չէ, թէ յետ է ստացուած և կամ հաշուած ռոճիկներին։ Նոյնիսկ Ադաբէգ Զաքարեանին տրուած 25 ռուբլու մասին էլ ոչ մի յիշատակութիւն չկայ, ոչ մուտք է գրուած և ոչ էլ յայտնի է, թէ պարտք է հաշուած։ Այն ինչ աւանսները անհրաժեշտ էր նախ մուտք գրել և ապա ելք գրել, եթէ Նոյնիսկ հաշուած են ռոճիկի կամ պարտքի։

VI. Իշխան Արղութեանների, Միրզոյեանի և Ղարաղուլումչեանի, առաջինների կտակով, իսկ վերջինների հաշով դպրոցում պահուած որդեգրուհիների համար ծախսուած է ել և մուտքի մատեաններով և եղած փաստաթղթերով

1908/9	ուսումն. տարում	. . . .	98 — 32
1909/10	» »	. . . .	149 — 69
1910/11	» »	. . . .	20 — 45
		ԳՈՒՄԱՐ .	268 — 46

Այն ինչ համաձայն Արղութեանների կտակին և հաստատած նախահաշիւների, իւրաքանչիւր տարի պէտք է ծախսուէր 300 ռ. – ուրեմն երեք տարում 900 ռուբլի։ Ղարաղուլումչեանից ստացել է իւրաքանչիւր տարի 25 ռուբլի – ընդամենը 75 ռուբլի, իսկ Միրզոյեանից 1908/9 և 1909/10 ուս. տարիների համար ստացուած է 100-ական ռուբլի ընդամենը 200 ռուբլի։ Այնպէս որ Հոգաբարձութիւնը բոլոր որդեգրուհիների պէտքերի համար իր ռամեայ պաշտօնավարութեան ժամանակ պէտք է ծախսած լինէր ընդամենը 1175 ռուբլի, բայց ինչպէս վերևը տեսանք, ծախսել է միայն 268 ռուբլի 46 կոպէկ։ Այստեղ չէ կատարել բարերարների կամքը և ցանկութիւնը լիակատար կերպով։ Յանձնաժողովս այս հարցը լուսաբանելու համար դիմեց Հոգաբարձութեան նախկին դանձապահ պ. Վ. Բարսամեանին, որի բացատրութիւնից պարզուեց, որ թէ Միրզոյեանի և թէ Ղարաղուլումչեանի որդեգրուհիների կարիքների համար ծախսուած գումարներին չկան առանձին փաստաթղթեր և բարերարներին էլ չէ տրուած, այլ Հոգաբարձութեան կողմից ուղարկուած է պաշտօնական թղթեր նպաստները ստանալու մասին և այդ գումարները մուտք է գրուած ել և մուտքի մատեաններում, իսկ ծախսերը եղել են ընդհանուրի հետ և մտել են բոլոր որդեգրուհիների ծախսերի մէջ։ Յանձնաժողովս Հոգաբարձութեան այդքան պակաս նպաստները յատկացնելը և ծախսելը գտաւ նախ հակառակ բարերարների կամքին և ցանկութիւններին և երկրորդ Հոգաբարձութիւնը երբէք իրեն իրաւունք չպէտք է համարէր տնտեսել ոչ միայն Արղութեանների անունով որդեգրուհիների համար յատկացրած 900 ռ. այլ և միւսների նպաստներից 6 ռուբլի 54 կոպէկը։ Դրպրոցում անշուշտ կըլինէին կարիքաւոր աշակերտուհիներ, որոնց համար, եթէ Նոյնիսկ ծախսէր վերոյիշեալ ամբողջ գումարը հազիւ բաւականութիւն տար նրանց անհրաժեշտ կարիքներին։ Երրորդ՝ լաւ կըլինէր այդ նպատակով ծախսելիք գումարների համար պահէր առանձին փաստաթղթեր։

VII. Զանազան անհատներից պարտք վերցրած 985 ռուբլուց, մուտքի մատեաններով վերադարձուած է ընդամենը 727 ռուբլի, իսկ մնացածը յայտնի չէ, վերադարձրած է թէ ոչ։ Այդպիսի պարտքերից է տեղական յաջորդից վերցրած 135 ռուբլին, որը անշուշտ կամ վճարուած է և կամ հաշուած է մի այլ մուտքի փոխարէն, բայց ելք չէ գրուած։

VIII. Մոմի կապալառուներին տրուած է մամագին 4850 ռուբլի 13 կոպէկ։ Այս գումարի համար լրիւ փաստաթղթեր չկային, օրինակ. Զաքմիշեանից գնած մոմերի համար չկային լրիւ բոլոր փաստաթղթերը, իսկ Յարութիւն Մկրտչեանը իր ստացած գու-

23624-67

մարների համար պարբերաբար ստորագրութիւն չէ տուել, այլ եկ և մուտքի մատեանների մէջ ստորագրել է միանգամից և այն էլ մօտ ժամանակներս, ինչպէս այդ հաստատում է Յանձնաժողովիս կողմից հրաւիրուած էկսպերտների այդ մասին կազմած արձանագրութիւնը, որ կցած է սոյն զեկուցմանը։

IX. Դպրոցի նորոգութեան համար եղած ծախսերը փաստաթղթերով ելք է գրուած ընդամենը 203 ռուբլի 18 կոպէկ։ Նոյնպիսի ծախսերի համար տրուած գումարներ մտել են նաև մանր ծախսերի մէջ։ Ընդհանրապէս այս ծախսերը կատարուել են անհոգ և անուշադիր կերպով. օրինակ. նոյն ամսուայ մէջ երկու անգամ ծախս է գրուած դպրոցի արտաքնոցների նորոգութեան համար. 1908 թուի Հոկտեմբերի 22-ին տրուած է 28 ռուբլի 5 կոպ., դարձեալ նոյն ամսում տրուած է 11 ռուբլի 25 կոպէկ։

X. Եկեղեցու նորոգութեան համար ծախսուած է 223 ռուբլի 54 կոպ., որից 122 ռուբլի 50 կոպէկ ծախսուած է Վեհափառ Կաթուղիկոսի գալու ժամանակ։ Այդ ծախսերից մի քանիսի մէջ եկ և մուտքի մատեաններով և փաստաթղթերով վերաստուգման ժամանակ Յանձնաժողովս գտաւ հետեւեալ տարբերութիւնները. 1909 թուի Յունիսի 23-ին ներկարար Խաչատուր Պետրոսեանին փաստաթղթով տրուած է 22 ռուբլի, այն ինչ եկ և մուտքի մատեանի մէջ գրուած է ծախս 28 ռուբլի։ Նոյն վարպետին Օգոստոսի 15-ին փաստաթղթով տրուած է 10 ռուբլի, իսկ մատեանում գրուած է 18 ռուբլի, այնպէս որ Հոգաբարձութիւնը այդ ծախսերի մէջ աւել է ցոյց տուել եկ և մուտքի մատեաններով 14 ռ.։

XI. Եկեղեցու և կրպակների մայթերի շինութեան համար ծախսուած է 209 ռուբլի 40 կոպէկ, որից 142 ռուբլի 50 կոպէկի համար փաստաթուղթ չկայ, որը ելք է գրուած 1910 թուի Դեկտեմբեր ամսում և յայտնի չէ թէ ում է տրուած։

XII. Ռոճիկ դպրոցի ուսուցիչներին, Հոգաբարձական խորհրդի քարտուղարին և ծառաներին, եկ և մուտքի մատեաններով տրուած է.

	Ռ.	Կ.
1907/8 ուսումն. տարւայ հաշւից . . .		
նախկին ուսուցիչներին և ուսուցչուհիներին . .	3892	— 75
1908/9 ուսումն. տարում	8287	— 27
1909/10 » »	6018	— 45
1910/11 ուս. տար. { Վ. Բարսամեանի ձեռամբ	4077	— 89
1910/11 ուս. տար. { Յ. Էհրամճեանի ձեռամբ	2064	— 60
Ընդամենը	24340	— 96

Վերոյիշեալ ռոճիկները տրուած են պահանջաթերթերով, բայց Հոգաբարձութիւնը Յանձնաժողովիս բոլոր պահանջաթերթերը չներկայացրեց. 1908 թուից պակաս էր Սեպտեմբեր ամսի պահանջաթերթը, 1909 թուից Դեկտեմբեր ամսինը, 1910 թուից— Սեպտեմբեր. Հոկտեմբեր, Նոյեմբեր և Դեկտեմբեր ամիսներինը. իսկ 1911 թուի համար և ոչ մի պահանջաթերթ։

1907/8 ուս. տարւայ հաշւից տրուած 3892 ռուբլի 75 կոպ. ռոճիկների համար միայն մի փաստաթուղթ կար 300 ռուբլու պ. Թ. Խզմալեանից. միւս գումարի համար և ոչ մի փաստաթուղթ։ Ընդհանրապէս ռոճիկների բաշխումը կատարել է չափազանց անկանոն կերպով. 5 ռուբլուց* սկսած մաս մաս տրուած է ռոճիկ և այդպէս էլ ելք է գրուած եկ և մուտքի մատեանների մէջ ու դրա համար էլ ամբողջ երեսներ է յատկացրած մի ամսուայ տրուելիք ռոճիկի համար. իսկ այդ մաս մաս տրուած ռոճիկների շատերի համար չկային փաստաթղթեր։ Այդ անկանոն բաշխումից և անկանոն ելք գրելուց առաջ է եկել այն, որ նոյն ռոճիկը երկրորդ անգամն է տրուած և ուշադրութեան չէ առնուած օր. 1908 թուի Յունուար ամսին ծառաների ռոճիկ 60 ռուբլին. 1908 թուի Դեկտեմբերի 20-ին գրուած է. «Դպրոցի ծառաներին աւանսով տրուած է Յունուար ամսի ռոճիկը 60 ռուբլի», բայց 1909 թուի Յունուարի համար առանձին 18-ին ելք է գրուած «յունուար ամսի ռոճիկ 60 ռ.» .. Իսկ հետեւեալ իւրաքանչիւր ամիսների համար առանձին առանձին ելք է գրուած 60-ական ռուբլի։ Մուտքի բաժնում էլ աւանսով տրուած 60 ռուբլու մասին ոչ մի խօսք չկայ, թէ յետ է ստացուած աւանսը. հետեւապէս պէտք է ընդունել, որ այդ 60 ռուբլին Յունուար ամսի, կրկնակի է գրուած և որը Յանձնաժողովիս կարծիքով պէտք է ելքի ընդհանուր գումարից դուրս գալ և ծախսը պակասեցնել 60 ռուբլով. Նոյնպէս կրկնակի գրուած ռոճիկների հաշւից Յանձնաժողովս գտաւ և մանրը ծախսերի մէջ, որի մասին իր տեղում ցոյց կըտրի։ Այս խառնաշփոթութիւնը առաջ է եկել և այն հանգամանքից. որ ռոճիկ են տուել, բացի զանձապահից նաև զանազան անձնաւորու-

* Տես № 205 փաստաթուղթ համարածը։

թիններ. օր. Յարութիւն Արաբաջեանը, Գ. Տաթևեանը և մինչև իսկ խորանի մոմավաճառ Մահտեսի Աւետիս Տէր-Մատթէոսեանը։*

XIII. *Եկեղեցու մանր ծախսեր.*—Այս անուան տակ ել և մուտքի մատեաններին կլից բաժնում իւրաքանչիւր ամսայ համար կան գրուած առանձին յօդուածներ, սկսած 1908 թւի Յուլիս ամսից, իսկ մինչև Յուլիսը իւրաքանչիւր գնուած իրի ծախսը առանձին գրուած է։

Ել և մուտքի մատեաններով եկեղեցու մանր ծախս է գրուած 1908 թւի Ապրիլի սկզբից մինչև նոյն թւի Սեպտեմբերի 1-ը, , , , , , , ռ. 75 — կ. 91

1908/9 ուս. տարւայ համար , , , ,	304 —	46
1909/10 ուսումն. տարւայ համար , , ,	567 —	29
1901/11 ուս. տար. մինչև Ապրիլի վերջը .	170 —	24
Գումար ,	1117 —	90

Այնպէս որ իւրաքանչիւր ամիս միջին թւով ծախս է գրուած.

1908 թ, , , , , , , ,	15 —	18
1908/9 ուս. տար. » » » » ,	25 —	37
1909/10 ուս. տար, , , , , ,	47 —	27
Իսկ 1010/11 ուս. տ. իւրաք. ամիս միջին թւով	21 —	28

Վերոյիշեալ ծախսերի համար իբրև ապացուցագրեր Հոգաբարձութիւնը յանձնեց Յանձնաժողովիս թղթի երկար կտորների վրայ նշանակուած եղած ծախսերի ցուցակ իւրաքանչիւր ամիսների համար առանձին, բայց ի հարկէ դարձեալ թերի, ոչ բոլոր ամիսների համար։

Վերստուգման ժամանակ երևաց, որ այդ ցուցակ փաստաթղթերը ոչ վաւերացրած էին և ոչ էլ որ և է ստորագրութիւն կար. իսկ ցուցակ փաստաթղթերի մէջ կային նշանակուած 6 կոպէկից սկսած մինչև 18 ռուբլի 24 կոպէկ և իւրաքանչիւր այդպիսի ցուցակի ընդհանուր գումարը 17 ռուբլի 98 կոպէկից մինչև 115 ռուբլի 48 կոպէկն էր հասնում, որպիսի իւրաքանչիւր ամսի ծախսուած ընդհանուր գումարը ելք էր գրուած ել և մուտքի մատեանի մէջ։

Այդ ցուցակ-փաստաթղթերի մէջ մտած էին և զպրոցի ծա-

* Օր. № 202 փաստաթուղթը։

ռաների ռոճիկ, և գնուած գրքերի գին, և եկեղեցու սպասաւորների (տիրացուների) ռոճիկ և փայտի ու ածուխի արժէք, և «կոնդակի ու փուշտանների» համար վճարած արժէգին, մի խօսքով ամեն ինչ։ Վերոյիշեալ ցուցակ-փաստաթղթերի համար նախկին երեցփոխան պ. Վ. Բարսամեանը յայտնեց, որ զոքա ներկայացրել է խորանի մոմավաճառ Մահտեսի Աւետիս Տէր-Մատթէոսեանը և ի հաստատութիւն իր ասածի կանչել տուց վերոյիշեալ Տէր-Մատթէոսեանին, որը հաստատեց պ. Բարսամեանի ասածը և ցոյց տուց իր ծոցատետրը, որի մէջ իր պաշտօնավարութեան օրից գրած էր համապատասխան հոգաբարձութեան ներկայացրած ցուցակ փաստաթղթերի, այն բոլորը, ինչ որ կային վերջիններիս մէջ։

Յանձնաժողովս նոցա ներկայութեամբ համեմատելով ծոցատետրի մէջ գրածները թէ ել և մուտքի մատեաններում ելք գրուած գումարների և թէ ցուցակ-փաստաթղթերի մէջ գրածների հետ՝ գտաւ մի քանի ծախսեր կրկնակի գրած ել և մուտքի մատեաններում, որի համար էլ տուելի հիմնովին ստուգելու և համոզելու հարկ համարեց խնդրել մի քանի օրով Յանձնաժողովիս մօտ թողնել այդ ծոցատետրը ստուգելու այն ամիսների ծախսերը, որոնց համար Հոգաբարձութիւնը չէր բարեհաճել յանձնել փաստաթղթեր։

Այդ ցուցակ-փաստաթղթերով, ծոցատետրով և ել և մուտքի մատեաններով ստուգելու ժամանակ Յանձնաժողովս գտաւ, որ 1910 թւի Մայիս ամսայ 115 ռուբլի 48 կոպ. եկեղեցու և զպրոցի մանր ծախսերի մէջ կար Տէր-Մատթէոսեանի ձեռամբ տրուած զպրոցի ծառաներին ռոճիկի հաշուից 11 ռուբլի, նոյն թւի Յունիս ամսի 48 ռուբլի 65 կոպ. ծախսի մէջ նոյն ծառաներին տրուած էր 15 ռուբլի, իսկ 1910 — 11 ուս. տարւայ Սեպտեմբեր ամսի եկեղեցու մանր ծախսերի մէջ (26 ռուբլի 55 կոպ.) գրուած էր դարձեալ ծառաներին (զպրոցի) տրուած 5 ռուբլի, այնպէս որ այդ ծախսերի մէջ մտած էին ի հաշիւ ծառաների ռոճիկի տրուած 31 ռուբլի և այդ 31 ռուբլին կրկնակի էր գրուած, որովհետև նոյն ծառաներին վերոյիշեալ ամիսներում ելք էր գրուած ել և մուտքի մատեանում լրիւ։ Դարձեալ 1910 թ. Յուլ. ամսի*

* Տես № 33 «եկեղեցու մանր ծախսերը»-ի ցուցակը։

75 ռուբլի 61 կոպէկ մանը ծախսերի մէջ մտել էր № 1 ուխտաւորների սենեակի համար գնուած «կոնդերի և փուշտաների»-ին վճարուած Վարդան Բալասանեանին 18 ռուբլի 24 կոպէկը, որի համար կայ առանձին փաստաթուղթ № 234, 1910 թւի Յուլիսի 27-ին տրուած նոյն Բալասանեանից, որը և կցած է սոյն զեկուցմանը։ Իսկ նոյն 18 ռուբլի 24 կոպէկ առանձին ելք է գրուած ել և մուտքի մատեանում 1910 թւի Յուլիսի 31-ին. հետևապէս, այդ 18 ռուբլի 24 կոպէկը ևս երկրորդ անգամ ծախս է գրուած։ Ուրեմն եկեղեցու մանը ծախսերի մէջ երկրորդ անգամ ծախս գրուածների գումարն է 49 ռուբլի 24 կոպէկ, որը պէտք է դուրս գալ ելքի գումարից։

Ընդհանրապէս այս մանր ծախսերը Յանձնաժողովս գտաւ շատ անկանոն գրութեան մէջ և անկոնտրոլ կատարուած ու ելք գրուած, որովհետև շատ շատերի համար չկային կանոնաւոր փաստաթղթեր. Իսկ Հոգաբարձութեան ներկայացրած ցուցակ-ապացուցագրերը Յանձնաժողովիս կարծիքով չի կարելի վաւերական համարել։ Որպէս նմուշ Հոգաբարձութեան ներկայացրած ապացուցագրերի կցած է սոյն զեկուցմանը №№ 33 և 259, որպիսիք նոյն Հոգաբարձութիւնը համարել էր փաստաթուղթ և յանձնել Յանձնաժողովիս։

Նոյնպէս աչքի էր ընկնում մի հանգամանք ևս, որ 1910 թւի եկեղեցու մանր ծախսերը համեմատած միւս տարիների նոյնանման ծախսերի հետ մեծ տարբերութիւն կազմում։

XIV. Ռոճիկ եկեղեցու սպասաւորներին և նպաստ այրիներին. վերոյիշեալ վերտառութեամբ Հոգաբարձութիւնը ելք էր գրել

1908 թ. Ապրիլից մինչև նոյն թւի Սեպտեմ. 1-ը	668	— 90
1908/9 ուս. տարւայ	1325	— —
1909/10 ուս. տար.	1174	— —
1910/11 ուս. տար. մինչև 1911 թւի Ապրիլի վերջը Վ. Բարսամեանի ձեռամբ	854	— 75
1910/11 ուս. տ. Ղ. քհ. Մատնիշեանի ձեռամբ	236	— 50
Ընդամենը .	4259	— 15

Այս ելքի համար Հոգաբարձութեան ներկայացրած պահանջաթերթ-ապացուցագրերը դարձեալ թերի էին. իւրաքանչիւր ամսի համար պէտք է լինէր պահանջաթերթ, բայց պակասում

էին 1908 թւի Ապրիլ, Մարտ, Յուլիս, Օգոստոս, Սեպտեմբեր և Նոյեմբեր ամիսների պահանջաթերթերը, 1909 թւի Յունուար ամսինը. իսկ Ղ. քհ. Մատնիշեանի ձեռքով տուածների համար ոչ մի ապացուցագիր չկար։

Ելքի այս յօդուածներն ևս տարուել էին անկանոն։ Նախ՝ այս ծախսերի մէջ մտել չէին եկեղեցու սպասաւորների բոլորի ռոճիկը. երկրորդ՝ իւրաքանչիւր տարւայ ամսական ռոճիկների մէջ տարբերութիւններ էր նկատւում. օրինակ. 1908 թւի տրուելիք ամսական ռոճիկի քանակի (130—125 ռուբլի) փոխարէն տրուած էր 110 ռուբլի. 1909 թւի ամսական ռոճիկի փոխարէն (115 ռ.) 95 99 ռուբլի. 1910 թւի ամսական ռոճիկի փոխարէն (111—116 ռուբլու) 99 ռուբլի։ Իսկ Ղ. քհ. Մատնիշեանը իր պաշտօնավարութեան ժամանակ ըստ իր հայեցողութեան աւելացրել է ռոճիկները. լուսաբարին ամսական 5 ռուբլով, երկու տիրացուներին մէկին 3 ռուբլի միւսին 2 ռուբլի։

XV. *Դպրոցի մանր ծախսեր։* Այս ծախսերը մեծ մասամբ գրուած են ել և մուտքի մատեաններում առանձին յօդուածներով, բայց կային նաև եկեղեցու մանր ծախսերի հետ միասին հաշուած. Յանձնաժողովս ըստ հնարաւորութեան առանձնացրեց և ի մի ամփոփեց, այնպէս որ, 190819 ուս. տարւայ համար ծախս էր գրուած 80 ռուբլի 21 կոպէկ, միջին թւով ամսական 8 ռուբլի 90 կոպէկ. 1909110 ուս, տարւայ՝ 78 ռուբլի 85 կոպ. միջին թւով—8 ռուբլի 76 կոպէկ (այս բոլորը հաշուած է և բաժանուած 9 ամիսների վրայ). իսկ 1910111 ուս. տարւայ 6 ամսւայ համար ծախսուած է 50 ռուբլի 81 կոպէկ. — միջին թւով 8 ռուբլի 46 կոպէկ։ Ընդհանրապէս մանր ծախս պէտք է հասկանալ դպրոցի համար գնուած զանազան իրերի ծախս, օր. նաւթ. կաւիճ և այլն։ Բայց շատ տեղեր յայտնի չէ թէ ինչպիսի իրերի համար է ծախսուած, որովհետև կանոնաւոր փաստաթղթեր չկային։ Բացի այդ կար նաև Յարութիւն Արաբաջեանի ձեռամբ ծախսուած և ելք գրուած 1908 թւին «դպրոցի պէտքերի համար» մի անգամ 226 ռուբլի և մի ուրիշ անգամ 26 ռուբլի 5 կոպէկ։ առաջինի համար ստորագրութիւն կայ, իսկ երկրորդի համար — չկայ։ Բայց թէ ինչպիսի պէտքերի համար է եղել այդ ծախսերը, յայտնի չէ և նոյն իսկ թէ պ. Յարութիւն Արաբաջեանը և թէ պ. Զահան

Բարսամեանը զոհացուցիչ պատասխան չկարողացան տալ, յայտնելով որ չեն յիշում։

Ընդհանրապէս այս ծախսերի համար ևս չկային զոհացուցիչ փաստաթղթեր. միայն 1908/9 ուս. տար. եղած մի քանի ծախսերի համար կար աւագ-ուսուցչի ստորագրութեամբ ստացականներ, այն էլ ընդհանուր գումարի ստացման մասին, որից իբրև նմուշ կցած է սոյն զեկուցմանը № 61-րդ ստորագրած ստացականը։ Իսկ միւս տարիներում եղած ծախսերի համար չկային փաստաթղթեր։

XVI. Կրպակների նորոգութեան համար եղել են պ. Վ. Բարսամեանի ձեռամբ 95 ռուբլի 10 կոպէկ, իսկ պ. Յակոբ Էհրամճեանի ձեռամբ 202 ռուբլի 61 կոպէկ ծախս։ Վերջին 202 ռուբլի 61 կոպէկ ծախս եղել է մօտ ժամանակներս, ինչպէս այդ երևում է ել և մուտքի մատեանից. Արամ Միքայէլեան Յովհաննիսեանի վարձած կրպակի համար, բայց փաստաթուղթ չկայ, թէ ում է տրուած և ինչպիսի նորոգութեան համար է ծախսուած։

Միւս ելք գրած ծախսերի համար, բացի գնահատական տուրքից, ոչ մի կանոնաւոր փաստաթուղթ Հոգաբարձութիւնը չէր բարեհաճել ներկայացնել Յանձնաժողովին։

Վերջացնելով ելքի վերաբերմամբ վերև յիշուած բացատրութիւնը, Յանձնաժողովս նախքան ընդհանուր դիտողութիւններին անցնելը, հարկ է համարում յայտնել ելքի և մուտքի մասին հետևեալը.—Հիմնելով Յանձնաժողովիս վերստուգման ժամանակ դուրս բերած, և վերև յիշուած փաստերի վրայ Հոգաբարձութիւնը իր եռամեայ պաշտօնավարութեան ժամանակ մուտք չէ գրել 2372 ռուբլի 35 կոպ. իսկ ելքի բաժնում կրկնակի է գրել 123 ռուբլի 24 կոպէկ. ընդամենը ուրեմն Հոգաբարձութեան գրամարկղում պէտք է լինէր երկու հազար չորս հարիւր իննսուն և հինգ ռուբլի յիսուն և ինն կոպէկ (2495 ռուբլի 59 կոպէկ), այն ինչ 1911 թւի ել և մուտքի մատեանի 16-րդ երեսում գրած է. «ց 21-ն Ապրիլի 1911 թ. մնում է գրամարկղում 8 ռուբլի 41 կոպէկ», որի տակ ի հարկէ պատշաճաւոր վաւերացումն չկայ։ Իսկ պ. Յակ. Էհրամճեանը իր վարած ել և մուտքի մատեանը փակելով, դարձեալ առանց պաշտօնական վաւերացման, ցոյց է տուել ելքը 55 ռուբլի 6 կոպէկով աւելի մուտքից. ո՞րտեղից է

ծախսել այդ 55 ռուբլի 6 կոպէկը—յայտնի չէ. նոյնպէս անհասկանալի մնաց Ղ. քհ. Մաանիշեանի ելք գրած 1906—1907 թ.թ. համար Յաջորդարանի կահ-կարասիների արժէքի համար ծախս գրուած մի հարիւր ռուբլին, որովհետև պարզ չէ. պարտք է վճարած թէ մի այլ բան, այն էլ 1911 թւի Մայիս ամսում։

ԵԶՐԱՓԱԿՈՒՄՆ.

Յանձնաժողովս վերջացնելով իր մասնակի դիտողութիւնները անկանոն ու առանց փաստաթղթերի ել և մուտքի մատեանների մէջ մտած արդիւնքների ու ծախսերի վերաբերմամբ և թողնելով գնահատութիւնը յարգելի ծխականներիդ բարեհայեցողութեանը՝ հարկ է համարում նաև յայտնել իր այն դիտողութիւնները, որ նկատել են վերստուգման ժամանակ.

Ա. Հոգաբարձութեան Յանձնաժողովիս յանձնած մոմի ել և մուտքի մատեանը և 1910, 1911 թ.թ. ել և մուտքի բոլոր մատեանները վաւերացրած և կնքուած են վերջերս Հոգաբարձութեան կնքով, նախագահի և քարտուղարի ստորագրութեամբ. իսկ 1910 և 1911 թ.թ. ել և մուտքի մատեանների հաշիւները գրուած են ոչ թէ պարբերաբար իւր ժամանակին, այլ ամբողջ մատեանները արտագրուած են միաժամանակ—մի անգամից, ի հաստատութիւն որի կցուած է սոյն զեկուցմանը 1911 թւի Օգոստոսի 2-ի Յանձնաժողովիս հրաւիրած էկսպերտների այդ մասին կազմած արձանագրութիւնը։

Բ. Բոլոր ել և մուտքի մատեանները Հոգաբարձութիւնը յանձնեց Յանձնաժողովիս չփակուած և առանց վաւերացման. Հոգաբարձութիւնը իր եռամեայ պաշտօնավարութեան ընթացքում նոյն իսկ չէր համեմատել և ստուգել մուտք և ելք գրուած արդիւնքները և ծախսերը անդորրագրերի մատեանների և փաստաթղթերի հետ, ապացոյց որի կարող են ծառայել 1) պ. Վ. Բարսամեանի անդորրագրերով ստացած, բայց մուտք չգրած կալուածների եկամուտ 899 ռուբլի 80 կոպէկը. 2) Թոշակագրամների 161 ռուբլի 60 կոպ., 3) պ. Գ. Տատթեանի ներկայացրած տեղեկագրերով. իր հաւաքած և չյանձնած կալուածների

եկամուտներից 300 ռուբլի 90 կոպ, 4) Ելքի բաժնում պ. Բարսամեանի կրկնակի գրած ծառաների ռոճիկ և այլ ծախսերը և 5) Այն պակաս մտած եկամուտները. որոնք անդորրագրերով ըստացած են, բայց մուտք չեն գրուած և որոնց մասին արդէն յիշատակուած է։

Թէև 1908 — 1909 թ.թ. ել և մուտքի մատեանի մէջ կային գրուած զանազան նշաններ, որից կարելի է ենթադրել, որ միայն այդ մատեանը ենթարկուած է վերստուգման, սակայն Ցանձնաժողովիս դուրս բերած և վերև յիշուած փաստերի հիման վրայ կարելի է յայտնել, որ այդ մատեանը ևս չէ ստուգուած Հոգաբարձութեան կողմից, այլ փորձել են ստուգել, բայց կիսատ են թողել։

Գ. Հոգաբարձութիւնը ելքի և մուտքի մատեանները չենթարկելով ստուգման ուսումնական տարւայ մէջ և վերջը ելքի ու մուտքի յօդուածները գրել են անկանոն, մինչև իսկ տեղ-տեղ յօդուածները — գծուած են և մի այլ տեղ նորից գրուած առանց նկատողութեան, մի քանի թերթեր բաց է թողնուած առանց փակելու։ Օր. 1910 և 1911 թ.թ. ել և մուտքի մատեանները, որոնց մէջ եկամուտները և ծախսերը գրուած են անկանոն, ոչ ժամանակին և ոչ էլ ճշտութեամբ։

Դ. Հոգաբարձութիւնը չբարեհաճեց ներկայացնել Ցանձնաժողովիս իր եռամեայ պաշտօնավարութեան շրջանում տեղի ունեցած մուտքերի և ծախսերի վերաբերմամբ կայացրած որոշումների պատճէնները, չնայելով Ցանձնաժողովս այդ առթիւ դիմում արեց և խնդրեց, որին ի պատասխան ստացուեց Օգոստոսի 26-ի № 80 գրութիւնը, որի մէջ շատ խուլ կերպով, ի միջի այլոց Հոգաբարձութիւնը յայտնում էր. «Ինչ կվերաբերի խորհրդիս եռամեայ հաշիւներին, երեք տարւայ ժապաւինեալ մատեաններն էլ գտնուում են Ցանձնաժողովիդ մօտ»... և ուրիշ ոչինչ։ Այդ իսկ պատճառով Ցանձնաժողովիս անբացատրելի մնաց, թէ որպիսի զպրոցական պէտքերի համար է ծախսուած պ. Ցար. Արարաջեանի ձեռամբ 226 ռուբլին, պ. Հայկ Ամատունու՝ 28 ռ. 87 կ. և պ. Ա. Օլթեցեանի ծախսածները և նոյնպէս նման այլ ծախսերը։ Ինչո՞ւ և ո՞ր որոշումների հիման վրայ մուտք չէ գրուած Ցանձնաժողովիս վերստուգման ժամանակ երևան հանած

եկամուտները և թէ եղել են այդ մասին Հոգաբարձական խորհրդի կողմից դիտողութիւններ և դրա մասին արդեօք արձանագրութիւնների մէջ։ Հարցեր, որոնք մնացին մութն և անբացատրելի Ցանձնաժողովիս համար։

Ե. Հոգաբարձութիւնը ծախսերի համար չէ ունեցել առանձին «օրդերի» մատեան, որով գոնէ յայտնի կլինէր, թէ ո՞ր ժողովի որոշման համաձայն այս կամ այն ծախսը ելք է գրուել զանձապահի կողմից։ Այդ ձեով եթէ տարուէր, գոնէ որոշ կոնտրոլի կենթարկուէր ելք գրելիք գումարները և ծախսերը տեղի կունենային Հոգաբարձութեան դիտութեամբ, ինչպէս տեղի է ունենում ամեն մի հիմնարկութեան և հաստատութեան մէջ։

Զ. Հոգաբարձութիւնը ել և մուտքի մատեանների մէջ թէ զպրոցի և թէ եկեղեցու եկամուտները և ծախսերը մտցրել էր խառն ի խուռն. աւելի նպատակայարմար կլինէր եթէ իւրաքանչիւրը պահուէր առանձին մատեաններով և իր փաստաթղթերով։

Է. Հոգաբարձութիւնը անտես էր առել ծխական ժողովի որոշումը և իր հայեցողութեամբ 1908/9 ուս. տարւայ Հոգաբարձական խորհրդի քարտուղարին 15 ռուբլու փոխարէն տուել էր 25 ռուբլի, որը ինչպէս երևում է, բացի արձանագրութիւններ կազմելուց և պաշտօնական գրութիւններ գրելուց զատ, համարեայ թէ ոչնչի չէ խառնուել և երբ տուել են ել և մուտք գրելու մատեանի մէջ, այն էլ կատարել է անկանոն. օր. 1910 թ. մատեանը, որտեղ չէ գրուել ել և մուտքը ամբողջովին։

Ը. Հոգաբարձութիւնը թէև իր Յուլիս 20 թուակիր և 71 թուահամար գրութեամբ յայտնեց Ցանձնաժողովիս ի պատասխան նոյն ամսի 18-ի № 2 գրութեանը. «որ ներկայումս հրաժարուած երեցփոխը ստուգում է իր եռամեայ հաշիւները և երբ սոյն եկեղեցու և զպրոցի հաշի մատեաններն ու ապահովագրերը, մայր մատեանը և օժանդակիչ գրքերը արդարացուցիչ փաստաթղթերով ստանայ Ցանձնաժողովիդ գրութեան մէջ յիշատակուած անձերից և ամփոփէ—Ցանձնաժողովիդ առանձին հրաւէր կուղարկէ ստանալու այնպիսիք պատշաճաւոր ցուցակագրութեամբ»... և թէ և նոյն Հոգաբարձութիւնը յանձնեց Ցանձնաժողովիս 308 հատ հաշիւներ թուահամարներով նշանակուած, որպէս փաստա-

թղթեր, բայց վերստուգման ժամանակ պարզուեց, որ ոչ հրաժարած երեցփոխանն էր ստուգել իր եռամեայ հաշիւները և ոչ էլ Հոգաբարձութիւնն էր ամփոփել և ստուգել այդ յանձնած հաշիւներն, փաստաթղթերը և մատեանները. ապացոյց վերևն յիշուած փաստերը և նկատողութիւնները և որ գլխաւորն է, ստորև դրուած փաստաթղթերի նմուշները, որ կցուած են սոյն զեկուցմանը և որոնց մասին Յանձնաժողովս հարկաւոր համարեց յայտնել իսկութեամբ։

1. Հոգաբարձութեան ներկայացրած №№ 79, 85, 139 141, 148 և 150 փաստաթղթերը ոչ մի առնչութիւն չունէին իրենց գործունէութեան հետ, այլ դոքա Ս. Լուսաւորիչ եկեղեցու դպրոցի ծախսերին են պատկանում, իսկ թէ ինչ հիման վրայ է ներկայացրել այդ դոկումենտները Հոգաբարձութիւնը—այդ յայտնի չէ։

2) №№ 99 և 122 թղթի կտորները երբէք փաստաթուղթ չի կարելի համարել, որովհետև մէկի վրայ գրած է իբրև վերնագիր «ստանալ զանազան անձերից տոմսակների փող», իսկ ներքևը և միւս երեսում գրած են ուսուցիչների, ծառաների և զանազան մարդկանց անուններ, որոնց դիմացը գրած են թւեր և կատարած զանազան անհասկանալի թւաբանական գործողութիւններ։ Իսկ № 122-ից ոչինչ չի հասկացուում։

3) Մի շարք անստորագիր հաշիւներ, որոնց տակը գրած է «ստացայ լրիւ». իբրև նմուշ № 145 և № 199։

4) Պ. Վ. Բարսամեանի անունով №№ 31, 50 և 199 ներկայացրած հաշիւները, որոնց մասին դժուար է յայտնել, թէ Հոգաբարձութեան արած ծախսերի հաշիւներն են, թէ պ. Վ. Բարսամեանի անձնականը։

5) Եկեղեցու և դպրոցի մանր և այլ ծախսերի համար Հոգաբարձութեան ներկայացրած անստորագիր թղթերի կտորների վրայ գրած ծախսերի ցուցակները, որպէս աղքատացուցիչ փաստաթղթեր, որոնցից իբրև նմուշ կցած են սոյն զեկուցմանը №№ 33 և 259. որպիսիք երբէք փաստաթուղթ չի կարելի համարել։

6) Նոյն Հոգաբարձութիւնը ներկայացրել էր ի թիւս այդպիսի փաստաթղթերի և այնպիսիք, որոնք անորոշ և անհասկանալի բովանդակութիւն ունէին. օր. դպրոցի տեսուչ Աւ. Տէր-Գողոսեանի տուած 1910 թւի Նոյեմբերի 21-ի № 181 ստացականը, որով ճանապարհածախս է տրուած էջմիածին գնալու համար 15 ռուբլի։ Նոյն ստացականի վրայ գրած է պ. Գ. Տաթեւեանից ստացայ «№ 46/58 անդորրագրերով բոլորը 155, 67»։ Նախ յայտնի չէ, թէ այդ «115, 67»-ի մէջ մտնում է 15 ռուբլին և երկրորդ՝ այդ 15 ռուբլին տրուած է դպրոցի հաշուից, թէ իր, Աւ. Տէր-Գողոսեանի ռոճիկի հաշուից։

7) Նոյնպէս անհասկանալի և անորոշ է № 162 փաստաթուղթը. մի երեսի վրայ գրածից երևում է, որ գրավաճառ Գարեգին Տէր-Մինասեանը ստացել է 16 ռուբլի ուսումնական պիտոյքների համար Մահտեսի Ուետիս Տէր-Մատթէոսեանից, իսկ միւս երեսում գրած է 49 ռուբլի 53 կոպ. հաշիւ, որով գնուած է ձուկ, կանաչ, սուրճ և այլ ուտելիքներ։ Այս հաշիւը նոյնպէս անբացատրելի մնաց Յանձնաժողովիս համար, Հոգաբարձութեանն է պատկանում այդ հաշիւը, թէ մասնաւոր մարդու։*

Նախագահ Յանձնաժողովի՝ Գ. Միքայէլեան.

Անդամներ. { Հ. Տէր-Յովհաննիսեան.
Աղ. Քուսալեան.
Գէորգ Այվազեան.

Անդամ-քարտուղար Պ. Այվազեան.

[illegible]

* Այս զեկուցման մէջ յիշած բոլոր փաստաթղթերը և արձանագրութիւնների պատճէնները զեկուցման հետ ներկայացրած է տեղիս Հոգևոր Կառավարութեանը։

3530

2013

ՀՀ Ազգային գրադարան

NL0030508

3415